

Իրենց մօրկան կաթին կանչող ուլերուն  
 Ժեռուտ ճամբէն գիւղակ դարձող հօտին վրայ:  
 Բաժնըւեցան իրարմէ արփի ու մըշակ,  
 Լո՛ւռ՝ ձեռքերնին ճակտին դըրած մէկմէկու.  
 Ու՛ թիկնադարձ՝ արեւն ա՛լ տուն կը դառնայ  
 Լեռներէն վեր՝ ինչպէս մըշակն իջաւ գիւղ.  
 Առանց գոլին զոյգ մ'հոգածու ձեռքերու,  
 Բացավայրին մէջ կը մընան հասկ ու շիւղ,  
 Գիշերին հետ անգա՛մ մըն ալ միս մինակ...

Սարերուն վրայ կանանչ լոյս մը կը ցաթի,  
 Աղբիւրներուն կ'ելլէ խմբերզն արծաթի...

## 16. ԱՅԳԱՅԻՆ

Տանիքներուն վրայ մըշուշը սնդուս լաթեր կը փըռէ,  
 Ճամբաներուն վրայ արեւը՝ շոգոլիներ ոսկեման:  
 Որմին մօտիկ սըրիկն անվերջ՝ մեղեդիներ արոյրէ,  
 Որմին վըրան՝ աբլորն ըսթափ զարթօնքի ճիչն անսահման.  
 Որմին դիմաց աղջընակ մը տարփոտ երգեր կ'ոլորէ:

Աղանիներ, լաջակներու պէս մետաքսէ գունազեղ,  
 Ճամբէ ճամբայ կը թռչըտին թոյլ ծածանքով վաղանցիկ:  
 Աղբիւրին լուրջ ջուրերուն մէջ ճառագայթ մը կ'իյնայ շեղ,  
 Աղբիւրին հարթ քարին վըրայ՝ ձայնն հօտաղին երգեցիկ,  
 Աղբիւրին զով ծորակին հուպ՝ համբոյրն հովին առտըւան:

Խա՛չ հանեցէք ու ծա՛փ զարկէք, կարմրութիւններ հինայի  
 Եւ արփածին թոյրեր հագած՝ առտուն մեզի կը նայի:  
 Ծառերուն վրայ թռչուններու խմբերզն հիմա կ'անձրեւէ,  
 Ծառերուն տակ ծիծաղը քինջ, մանկան՝ յոգնած կաքաւէ,  
 Ծառերուն քով բոյրը ծաղկին՝ ամէն գոյնէ ու ձեւէ...